# HL. GHEVONDYANTZ

*Hl. Ghevont - Fragment aus „Vartanantz"-Gobelin*



**Am letzten Dienstag vorm Beginn der Großen Fastenzeit (Dieses Jahr am 17. Februar)** ist in der Armenischen Kirche **der Gedenktag der Hl. Ghevondyan-Priester**. Unter diesem Namen gedenkt die Kirche an die 7 armenischen Geistlichen, die nach der Schlacht der Vartanantz auf dem Feld von Avarayr im Jahre 451 auf Befehl des persischen Königs Yazgert nach Persien gebracht und verhaftet wurden, weil sie abgelehnt haben, das Christentum zu verleugnen. Im Gegenteil, jeder von denen hat tapfer seinen Glauben an Jesus Christus bekennt und auch dem Volk ermutigt, dem Evangelium Jesu Christi treu zu bleiben.

Einer von diesen 7 Geistlichen ist bei unserem Volk sehr bekannt – der Priester **Ghevond Yeretz**. Er war ein Held der Schlacht von Avarayr. Eine Schlacht, die Armenier gegen Persien „wegen der Heimat und des Glaubens" im Mai 451 geführt haben. Deshalb sind diese 7 Geistlichen unter dem Namen „Hl. Ghevondyantz" in die armenische Geschichte hineingegangen. Diese Geistliche waren – **der Katholikos Hovsep Hoghotzmetzi, die Bischöfe Sahak** und **Tatik, die Priester Ghevond, Musche, Arschen, Samvel, Abraham** und **Choren** sowie **die Diakone Katschatsch** und **Abraham**.

**Die Armenische Kirche hat alle diesen 7 Personen Heilig gesprochen, weil sie mutige Zeugen des wahren Glaubens Christi waren, trotzt unsäglicher Foltern ihrem Glauben treu blieben und zum Schluss „für die Heimat und den Glauben" den Kranz des Märtyrertums empfingen.**

„Hl. Ghevondyantz"-Tag ist gleichzeitig auch der Gedenktag all der armenischen Geistlichen, die im Laufe der armenischen christlichen Geschichte, insbesondere während der schwierigen Zeiten dieser Geschichte, mit ihrem ergebenen und weihevollen Dienst und oft auch mit ihrem Leben wahrhaftige christliche Zeugen und Märtyrer waren.

Der 17. Februar ist der Namenstag von: **Ghevond, Levon, Hovsep, Mushegh, Arshen, Arsen, Samvel, Abraham**. Wir wünschen allen, die einen von diesen Namen tragen, Gottes reichen Segen.

# ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

*Սբ. Ղեւոնդ&Սբ. Վարդան*



**Ամէն տարի մեծ Պահքին նախորդող երեքշաբթի օրը (Այս տարի 17 Փետրուարին)** Հայ Եկեղեցու մէջ յիշատակութեան օրն է **Սուրբ Ղեւոնդեանց քահանաների**: Այս անուան ներքոյ ոգեկոչւում են 7 հայ հոգեւորականներ, որոնք 451 թ. Վարդանանց Ճակատարամտից յետոյ Յազկերտ թագաւորի հրամանով տարւում են Պարսկաստան եւ բանտարկւում: Նրանց բոլորի „մեղքն“ էր, որ ժամանակին հրաժարուել էին ուրանալ քրիստոնէական հաւատքը: Ընդհակառակը՝ նրանցից իւրաքանչիւրը քաջաբար խոստովանել էր Քրիստոսի նկատմամբ ունեցած իր հաւատքը եւ ժողովրդին քաջալերել հաւատարիմ մնալ Քրիստոսի Աւետարանին:

Այս հոգեւորականներից մեր ժողովրդին յայտնի է մանաւանդ **Ղեւոնդ Երէցը**, որն եղել է 451 թ. Մայիսի 25-26-ին տեղի ունեցած „վասն հաւատի եւ վասն հայրենեաց“ Աւարայրի Ճակատամարտի հերոսներից մէկը: Եւ Ղեւոնդ Երէցի անունով էլ այս հոգեւորականները անցել են հայոց պատմութեան մէջ, որպէս Սրբոց Ղեւոնդեանց քահանաներ: Այդ հոգեւորականներն են՝ **Յովսէփ Հողոցմեցի Կաթողիկոսը, Սահակ** եւ **Թաթիկ եպիսկոպոսները, Ղեւոնդ, Մուշէ, Արշէն, Սամուէլ, Աբրահամ** եւ **Խորէն քահանաները,** ինչպէս նաեւ **Քաջաջ** եւ **Աբրահամ սարկաւագները**:

**Հայ Եկեղեցին բոլոր նրանց դասել է սուրբերի շարքը, քանի որ նրանք բոլորն էլ եղան ու մնացին Քրիստոսի Ճշմարիտ հաւատքի անվախ վկայողները, ենթարկուեցին անլուր տանջանքների եւ ի վերջոյ „վասն հաւատքի եւ վասն հայրենեաց“ ընդունեցին նահատակութեան պսակը:**

„Սուրբ Ղեւոնդեանց“ տօնը յիշատակի օրն է նաեւ բոլոր այն հոգեւորական-ների, որոնք հայ ժողովրդի քրիստոնէական պատմութեան ողջ ընթացքում, բայց մանաւանդ այդ պատմութեան ծանր ու դաժան տարիներին, իրենց անձնուրաց ծառայութեամբ եւ յաճախ նաեւ իրենց կեանքի գնով եղան քրիստոնէական Ճշմարիտ վկաներ ու նահատակներ:

Այսօր անուանակոչութեան օրն է հետեւեալ անունների՝ **Ղեւոնդ, Լեւոն, Յովսէփ, Մուշէղ, Արշէն, Արսէն, Սամուէլ, Աբրահամ**: Այս անուններն ունեցողներին մաղթում ենք աստուածային անսպառ օրհնութիւն: